ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Դեկտեմբերի 3-ին ԱրՊՀ ռեկտորի մոտ հյուրընկալվել է ՀՀ Արթիկ քաղաքի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Մխիթար Վարագյանի գլխավորությամբ:

Այցի ընթացքում փոխքաղաքապետ Բորիս Ավագյանն իր անձնական միջոցներից 120 միավոր գիրք է նվիրել ԱրՊՀ գրադարանին: Գրքերը ռուսերեն լեզվով արտասահմանյան դասական գրականության հատորներ են, որոնք կհամալրեն ԱրՊՀ գրադարանի գեղարվեստական գրականության բաժինը:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն է հայտնել նրանց՝ այցի և նվիրատվության համար՝ նշելով, որ պատերազմից հետո առաջին հաճելի հանդիպումն է կայանում բուհում՝ խորհրդանշական նվիրատվությամբ:

«Մեր օրերում գիրքը շարունակում է մնալ գիտելիք ստանալու հիմնական միջոց: Խորհրդանշական է նաև գիրք նվիրելը: ԱրՊՀ-ի համար սպասված նվեր էր այսպիսի արժեքավոր գրքեր ստանալը, մանավանդ՝ ռուսերեն լեզվով գրականություն, որովհետև բուհում ունենք «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությունը բակալավրիատում և մագիստրատուրայում»,-ասել է ռեկտորը՝ նաև անդրադառնալով ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությանը, Արցախում ռուսաց լեզվի կարևորությանն ու դարակազմիկ նշանակությանը:

Նվիրատու Բորիս Ավագյանն իր հերթին կարևորել է գրքի և ռուսերենի նշանակությունը երիտասարդ սերնդի կրթության հարցում՝ նշելով, որ այս դժվարին օրերին հատկապես պետք է ողջ ներուժը կենտրոնացնել երիտասարդ սերնդի համար լիարժեք կրթություն ապահովելու ուղղությամբ:

«Արցախի մայր բուհը, որ այս օրերին շարունակում է աշխատել, խորհրդանշում է այն, որ մեր ազգը գնալու է առաջ, պայքարելու ենք, և այս օրերի դժվարությունները կարողանալու ենք հաղթահարել»,-նշել է Բորիս Ավագյանը՝ ընդգծելով ռուսերենի, ռուս գրականության և պատմության իմացության անհրաժեշտությունը՝ որպես հայ ժողովրդի բարեկամ երկրի լեզվի, գրականության, պատմության և մշակույթի իմացություն:

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Շուշանիկ Ասրյանի նախաձեռնությամբ մագիստրատուրայի «Կառավարում» մասնագիտացման 2-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ «Մարդկային զարգացման հիմունքներ» դասընթացի շրջանակում կազմակերպվել են գիտական ընթերցումներ:

Ուսանողները հանդես են եկել զեկուցումներով՝ իրենց ինքնուրույն հետազոտություններում անդրադառնալով տարածաշրջանի երկրների տնտեսական երևույթներին ու գործընթացներին:

Շ.Ասրյանը, ուսումնական գործընթացում կարևորելով նման ձևաչափով գիտելիք ստանալու նշանակությունը, նշել է, որ հիմնախնդրային հետազոտության արդյունքում ուսանողները կարողանում են պատճառահետևանքային կապեր ձևավորել սոցիալ-տնտեսական երևույթների և գործընթացների միջև, բացատրել տարածաշրջանում առանձին երկրների կողմից իրականացվող քաղաքականության տրամաբանության հնարավոր հետևանքները:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Միրանուշ Ադամյան,
լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 5
ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
2020

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱրՊՀ-ՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԵՐՍԿՍՎԵԼ Է ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի

2020 թ. սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով ԱրՊՀ-ում ևս դադարեցվել էին ուսումնական պարապմունքները: Պատերազմի ընթացքում ռեկտորի հրամանով ուսումնական պարապմունքները անց էին կացվում հեռավար եղանակով:

Համաձայն նոյեմբերի 23-ին կայացած ռեկտորատի նիստի և ԱրՊՀ ռեկտորի համապատասխան հրամանի՝ 2020թ. դեկտեմբերի 1-ից ԱրՊՀ-ում ուսումնական գործընթացը վերսկսվել է ավանդական եղանակով:

Հանձնարարված էր համալսարանի բոլոր աշխատակիցներին և ուսանողներին՝ մինչև նոյեմբերի 30-ը վերադառնալ և գրանցվել համապատասխան ստորաբաժանումներում և անհարգելի պատճառով մինչև նոյեմբերի 30-ը չվերադարձած աշխատակիցների վարձատրության ու հետագա գործունեության հարցը ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:

Համալսարանի մասնաշենքերը արդեն ապահովված են ջեռուցմամբ, պատերազմից վնասված հատվածներում կատարվել են վերականգնման որոշակի աշխատանքներ:

Ուսումնական գործընթացի վերահսկման պատասխանատու ստորաբաժանումների կողմից կատարվող ամենօրյա մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ուսանողների հաճախելիությունը դասերին օրեցօր աճ է արձանագրում,ուսումնական գործընթացը կազմակերպվում է բնականոն հունով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետում տեղի է ունեցել հանդիպում Արցախի յոգայի ֆեդերացիայի նախագահ Գրիգորի Դադասյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել Գ. Դադասյանին հանդիպման համար՝ այն կարևորելով ստեղծված իրավիճակում հոգեբանական խնդիրները հաղթահարելու տեսանկյունից: Հանդիպումն ընթացել է ջերմ և անմիջական մթնոլորտում, բանախոսը ուսանողներին ներկայացրել է տեղեկություններ յոգայի նշանակության և կարևորության մասին:

«Յոգան մարդու հոգեկանի և ֆիզիկականի ներդաշնակությունն է»,- նշել է Գ. Դադասյանը՝ հավելելով, որ այն մարդուն օգնում է հեշտ ապրել:

Առաջին հանդիպումն ընթացել է ծանոթության, հարց ու պատասխանի ձևով: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ Գ.Դադասյանի հետ ուսանողության հանդիպումը կազմակերպել ոչ միայն այս ձևաչափով, այլ նաև պրակտիկ պարապմունքների ձևով:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որին ներկա էր նաև ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը:

Գիտխորհրդի նիստը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ պատերազմի պատճառով ԱրՊՀ զոհված ուսանողների և դասախոսների:

Օրակարգի առաջին հարցը վերաբերում էր ուսումնական գործընթացի ընթացքին, որի մասին տեղեկատվություն է ներկայացրել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը:

Ըստ պրոռեկտորի տեղեկատվության՝ ուսումնական գործընթացը, որը ավանդական եղանակով մեկնարկել էր դեկտեմբերի 1-ից, ընթանում է ըստ դասացուցակների և միայն ավանդական եղանակով: Արցախ վերադարձող և դասերին մասնակցող ուսանողների թիվը օրեցօր աճում է:

Գիտխորհուրդը քննարկել և որոշում է կայացրել մագիստրատուրայի առաջին կիսամյակի մնացած պարապմունքները կազմակերպել՝ ավանդականին համակցելով նաև հեռավար եղանակը:

Օրակարգի հաջորդ հարցով գիտխորհուրդը քննարկել և հաստատել է ԱրՊՀ ՊՈԱԿ բակալավրիատի (առկա և հեռակա ուսուցման համակարգի) 2021-2022 ուսումնական տարվա մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը լիազոր մարմին ներկայացնելու մասին հարցը:

2020-2021 ուսումնական տարվա ուսումնական գործունեության օրացույցում փոփոխություն կատարելու մասին հարցը գիտխորհրդին է ներկայացրել պրոռեկտոր Գ.Սահակյանը:

Ըստ հաստատված ուսումնական գործունեության նոր օրացույցի՝ 2020-2021 ուսումնական տարվա բակալավրիատի առկա համակարգի և մագիստրատուրայի ուսումնառությունը կտևի մինչև հունվարի 8-ը, կուրսային աշխատանքների և ստուգումների հանձնումը՝ հունվարի 11-15-ը, առաջին լուծարքը՝ հունվարի 18-29-ը, ձմեռային արձակուրդը՝ հունվարի 30-ից փետրվարի 7-ը, երկրորդ լուծարքը՝փետրվարի 15-26-ը:

Հեռակա ուսուցման համակարգի դասերը կմեկնարկեն հունվարի 11-ից:

Գիտխորհուրդը քննարկել և հաստատել է նաև հարգելի պատճառով պարապմունքներին չմասնակցած ուսանողների ստուգումները կազմակերպելու մասին հարցը:

Հարգելի են համարվում ընտանիքում հարազատի կորուստ ունեցող, պատերազմի հետևանքով տեղահանված և այլ հիմնավորված պատճառներով ուսանողների բացակայությունները:

ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը վստահեցրել է, որ հարգելի պատճառով պարապմունքներին չմասնակցած ուսանողները չեն տուժելու:

ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը, անդրադառնալով առկա խնդիրներին՝ նշել է, որ պատերազմին մասնակցած ուսանողների և նաև պատերազմին մասնակից անձանց զավակների ուսման վարձավճարները փոխհատուցելու է ՀՀ կառավարությունը, իսկ հայրենազուրկ ուսանողների վարձավճարը կփոխհատուցի «ՇԵՆ» կազմակերպությունը:

Այլ հարցերում գիտխորհուրդը քվեարկել և հաստատել է Տիգրան Հակոբյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ԲՈԿ-ի վավերացմանն ներկայացնելու մասին հարցը:

«ԱՐՑԱԽՑՈՒ ՈԳՈՒ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՒՄ»

Հունվարի 7-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել «Action for Peace» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ, հայ-հունական ծագում ունեցող լուսանկարիչ, հնագետ, դոկտոր Մարինա Մխիթարյան-Լազարիդուն: Մ. Մխիթարյան-Լազարիդուն Արցախում արդեն երկրորդ անգամ է: Առաջին այցը 2020 թ. սեպտեմբերին էր՝ նախքան պատերազմը՝ «Արցախի կանայք. պատերազմ, ինքնություն և խաղաղություն» վավերագրական լուսանկարչական պրոյեկտի համար նյութեր հավաքելու նպատակով, և որպես առաքելություն՝ մայր բուհի ուսանողությանն էր ներկայացրել իր հեղինակած «Խաղաղության հրեշտակը» խորագրով դասախոսություն-պրեզենտացիան:

Այս անգամ ևս դասախոսության թեման առնչվում էր իր նախագծին՝ «Գործողություն հանուն խաղաղության», որի ընթացքում բանախոսը ուսանողներին է ներկայացրել իր լուսանկարչական գործերից, որոնք պատմում էին հայի պատմական ճակատագրի, հայկական մշակույթի, և առհասարակ Արցախի մասին: Բանախոսը, ով արդեն հասցրել է տարբեր երկրներում հանդես գալ լուսանկարչական ցուցահանդեսներով, աշխարհի հետ խոսում է արվեստի լեզվով՝ մասնավորապես լուսանկարչությամբ, որով փորձում է իր նպաստն ունենալ հանուն աշխարհի խաղաղության և արդարության բարձրաձայնման:

«Հին հունարենով շատ լավ բառ կա՝ «նոստոս», որը նշանակում է վերադարձ տուն: Այս անգամ ես եկա իմ ծրագրի երկրորդ մասով՝ նոստոս հետպատերազմական վիճակ»,-ասում է Մ. Մխիթարյան-Լազարիդուն՝ նշելով, որ Արցախ վերադառնալն իր համար նման է հարազատ տուն վերադառնալուն:

«Հույսը, հավատը, սերը շատ կարևոր են, բայց ամենակարևորը սերն է: Աստված սեր է: Եվ ամեն լավ գործ սիրուց է ծնվում: Արցախի հանդեպ ունեցած իմ սերն է թելադրում իմ բոլոր գործողությունները: Ես եկա Արցախ այդ սիրո թելադրանքով և արցախցիների ոգու հզորությունից գոտեպնդված՝ գնալու եմ Արցախից»,-ասել է Մարինա Մխիթարյան-Լազարիդուն՝ հավելելով, որ յուրաքանչյուր անգամ Արցախ այցելելիս անպայման այցելում է մայր բուհ, քանի որ, արցախցու ոգու հզորությունը, արտաքուստ նուրբ ու փխրուն, բայց ներքուստ՝ հզոր հույսի ու հավատի ուժը ամենաշատը նա տեսնում է Արցախի երիտասարդության աչքերում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՂԻԿՆԵՐ ԵՆ ԽՈՆԱՐՀԵԼ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 19-ից 21-ը Արցախում և Հայաստանի Հանրապետությունում սուգ է հայտարարված: Սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի զոհերի հիշատակը հարգել են նաև ԱրՊՀ-ում: Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ մայր բուհի զոհված ուսանողների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ հարգանքի տուրք են մատուցել արցախյան պատերազմում անմահացած մեր նահատակների հիշատակին:

«Մենք պետք է հասկանանք, որ մեր հերոսների թափած արյունը անտեղի չէր, և կրկին կծնվեն հերոսներ, որովհետև մենք աշխարհում ունենք ամենաթանկը՝ մեր քաջորդիների արյամբ շաղախված հայրենիք»,- նշել բ.գ.թ., դոցենտ Զ. Բալայանը՝ հավելելով, որ հանուն նոր ապագայի պետք է ցույց տանք, որ արցախցին է իր հողի տերը ու այն շենացնողը:

«Մոնթե, Լեոնիդ, Պետո, Ռոբերտ, Ալբերտ... մերօրյա նահատակներ, խոնարհվում ենք Ձեր շիրիմներին: Մենք, հանդիսանալով մեր հայրենիքի ժառանգները, պետք է կրկին Աստծո զորությամբ մոխիրներից վեր հառնենք»,- նշել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Մարիամ Պողոսյանը: